ՆՈՐ-ԴԱՐ

№ 57 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 3 Ապրիլի 1896 Չորեքշաբթի 3 Ապրիլի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 57

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ռ. և հ. լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանիա և հանրաքուէ։

Քրոնիկոն. — Սասունցիների և ընդհանուր աղէտեալների օգտին եղած հանգանակութեան հաշիւը։ Ռուսաց ուսումնարան Ջուլֆիում։ Ուսուցիչների փոխադարձ օգնութեան ընկ.։ Սև ծովի նահանգ։ Թիֆլիսի լուսաւորութիւնը։ Բանւորական գործադուլ։ Բժշկականութեան դասեր հոգևոր սեմինարիաներում։ Պապյեանի կոնցերտը։ Սիմֆերոպոլից։ Առ. Ծատուրեանի գործարանը։ Երևանի քաղաքագլուխ։ Շահի գահակալութեան 50-ամեակը։ «Պէպօյի» ռուսերէն թարգմանութիւնը։ Բագուից։ Մի ակամայ պատասխան։

Մոսկուայի համալսարանի յիսնամեակը Շամախում։

Մամուլի շուրջը։

Թղթակցութիւններ. — Նամակ Պարսկաստանից — Ռըշտ։

Քաղաքական. — Թիւրքիա։ Բուլղարիա։ Ռուսիա և Չինաստան։ Իտալիա։ Քորէա։

Խառն լուրեր։

Հեռագրներ.

Տեղեկատու.

Յայտարարութիւններ։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՀԱՆՐԱՔՈՒԷ

(«Նոր-Դար»-ի Պարիզի թղթակցից)

Միացեալ Գերմանիան հանրաքուէն ճանաչեց իբրև կայսերական մեծութիւն։ Հանրաքուէն ամեն գերմանացու լիակատար իրաւունք է տալիս իւր ընդհանուր հայրենիքի, Գերմանիայի հարազատ զաւակը լինելու առանց դրութեան և ծննդավայրի խտրութեան։ Սակայն Գերմանիայի տիրող դասակարգը այժմ սկսում է կասկածանքով վերաբերուել դէպի հանրաքուէն և այդ նրա համար, որովհետև ժողովուրդը, նա որ փրկեց և ծնաւ ներկայ Գերմանիան, հանրաքուէի միջոցով սկսում է յերևան գալ իւր արդարացի պահանջներով, պահանջներ՝ որոնց լցուցանելը շահաբեր չէ տիրող—արտօնուած դասակարգի համար։ Թէ գերման կայսրը և իւր շահակից թագակալները ընկերավարականների ծաւալումից երկիւղ կրելով մի օր մի coup d'état-ով կվերացնեն հանրաքուէն և կփոխարինեն այն սահմանափակ քուէով—այդ ապագայ դէպքերը ցոյց կտան։ Բայց ինչոր այսօր բացայայտ է, այդ այն է որ տիրող դասակարգն իւր ապահովութիւնն աշխատում է որոնել յետադիմութեան մէջ։

Յետադիմութեան մի պայծառ օրինակ այս օրերս ցոյց տուեց փոքրիկ Սաքսոնիան։ Սաքսոնական կառավարութիւնը բաւական չհամարեց ոչնչացնել գոյութիւն ունեցող ընկերական և սէնդիկական ազատութիւնը, այլ տեսնելով ընկերավարականների յառաջադիմութիւնը, այժմ աշխատում է ոչնչացնել և հանրաքուէն, որ Սաքսոնիայի մէջ բացի կայսերական հաստատութիւնից նաև արքայական հաստատութիւն էր։

Սաքսոնիայի ժողովուրդը իւր պետական գործերը կատարում էր լանտագի միջոցով, իսկ լանտագի անդամներն ընտրւում էին ուղղակի հանրաքուէով։ Սակայն Սաքսոնիայի պատգամաւորների ժողովը մի օրինագիծ քուէարկեց, որով այսուհետև ոչնչանում է հանրաքուէն Սաքսոնիայի լանտագի ընտրութիւնների համար։

Փոխանակ հանրաքուէի, այսուհետև պիտի գործէ սահմանափակ քուէն։ Բայց թէ սահմանափակ քուէով տիրող դասակարգը իւր շահերն ընդ միշտ ապահովուած պիտի համարէ և յուզող խնդիրների առաջն առած, հակառակ ժողովրդական շահերի,—այդպէս կարծելը սխալ կլինէր։ Նոյն իսկ Բիսմարկը քսանուինը տարի առաջ ընտրութեան այդ եղանակը հրէշային է անուանել։

«Ընտրողական մի եղանակ», ասել է նա 1867-ի մարտի 27-ին, հիւսիսային Գերմանիայի պարլամէնտում, «որ բաժանում է ձայն տալու կոչուած բոլոր տարրերին, որ մինոյն դասակարգի մէջն է գտնում այնպիսի մարդիկ, որոնք ոչ մի ընդհանուր շահ չունին, որ իւրաքանչիւր համայնքում գործ է դնում տարբեր աստիճան, որ մի համայնքի մէջ ընդունում է իբրև ընտրողների առաջին դասակարգ այնպիսի մարդիկ, որոնք հարևան համայնքի մէջ նկատւում են իբրև երկրորդ կամ երրորդ դասակարգ. կառավարութեան մի եղանակ, որ բաժանում է Յովհաննէսը Պետրոսից, որովհետև սա մի փոքր աւելի է վճարում քան առաջինը, որ ամենակամածին կերպով մէկին մղում է պրոլետարիայի մէջ, իսկ միւսը վերին դասակարգի,—կառավարութեան մի այդպիսի եղանակ ողջմտութեան արդիւնք չէ և օրէնսդիրը երբէք այդ միջոցը չպիտի ընդունէր, եթէ չափէր նրա գործնական արդիւնքները»։

Ուրեմն Բիսմարկը դեռ 29 տարի առաջ այդպէս էր քննադատում Պրուսիայի ընտրողութեան եղանակը, որ դժբախտաբար դեռ մինչև ցարդ գոյութիւն ունի։

Ընտրութիւնների այդ «հրէշային» եղանակն է, որ այժմ ընդունում է Սաքսոնիայի թագաւորութիւնը շնորհիւ յետադիմական-շահախնդիրների խմբի։

Սակայն բոլոր ողջմիտ մարդիկ բողոքում են երկրի այդպիսի յետադիմական շրջանառութեան դէմ։ Եւ զարմանալին այն է, որ յետաշրջման այդ օրէնքը իւր դէմ է ունեցել ընդամենը քսանուերկու հոգի, որոնցից տասնհինգը ընկերավարականներ են, երեքն ազգային ազատամիտներ, մէկը յառաջադիմական, մէկը պահպանողական և հինգը անկախ անդամ «վարդապահութեան կուսակցութիւնից»։

Պատգամաւորների ժողովի այդ որոշումը կասկած չկայ, որ բարձրագոյն ժողովը ամենայն պատրաստականութեամբ կաճապարէ վաւերացնել։ Սաքսոնիայի պատգամաւորների ժողովի այդ օրինագիծն իւր ծանր հետևանքը պիտի ունենայ։ Նախ՝ պատգամաւորների ժողովի կազմակերպութիւնն այսուհետև բոլորովին պիտի կերպարանափոխուի։ Ընտրութիւններին մասնակցող ժողովրդի մեծ մասը այսուհետև իրաւունք չպիտի ունենայ քուէարկելու, նա դառնում է իրաւազուրկ, քաղաքական պարիայ։ Ուստի դիւրին է հասկանալ այն անհուն դժգոհութիւնը, որ այժմ տիրում է ժողովրդի մէջ։ Բայց խնդիր է թէ թղթի մի կտոր որ սատրճանի ապահով պատնէշ կարող է լինել ընդդէմ ժողովրդական հոսանքի, որ գիտակից է իւր իրաւանց և ուժի։ Այդ նոր յետադիմական օրէնքը իւր դէմ կունենայ ամբողջ Գերմանիայի ընկերավարականների միացեալ զօրութիւնը։ Եւ հենց ապագայի այդ երկիւղն է, որ նոյն իսկ ֆինանսական-առևտրականներին ստիպում է միջնորդ լինել թագաւորի մօտ, որպէսզի այդ անարդար օրինագիծը օրէնք չդառնայ։

Երկրորդ՝ արդեօք կայսերական-յետադիմականների բանակը Սաքսոնիան չի ընդունիլ իբրև մի փորձադաշտ և չի աշխատել նոյն սահմանափակ քուէն մտցնել կայսերական ընտրութիւնների մէջ։ Սաքսոնիայի այդ յետադիմութիւնը ցնծութիւն է պատճառում արդէն բոլոր յետադիմականներին։ Եթէ սաքսոնական ժողովրդի իրաւանց այդ կրճատումը անպատիժ մնայ, կասկած չկայ, որ յետադիմականների բանակը պիտի աշխատէ նոյնը մտցնել թէ այլ տեղական իշխանութեանց և թէ նոյն իսկ կայսերական ընտրութեանց մէջ։ Յայտնի է, որ Բեռլինի աջակողմեանների և մինչև անգամ ազգային—ազատամիտների մի մասը երկար ժամանակից ի վեր պայքար են մղում, որպէսզի ռայխստագի ընտրութեան հանրաքուէն ոչնչացնեն։

Գերմանական ժողովուրդը, որ դարերից ի վեր ամենայն տոկունութեամբ պայքարեց ներքին և օտար ազդեցութիւնների դէմ և կարողացաւ իւր միացումն ու անկախութիւնը յառաջ բերել, նա այժմ այնքան բարոյական և նիւթական ոյժ ունի, որ ընդունակ կլինի դիմադրաւել ամեն յետադիմական ազդեցութիւն որ իրաւանց և քաղաքակրթութեան դէմ է։

Ժողովրդական դատը հանրային է և արդար, լինի այդ դատը իւր արիւնակիցների դէմ, լինի օտար հարստահարիչների։ Հարստահարիչը և հարստահարուողը զանազան տեղ զանազան գոյն և անուն ունին, բայց ամեն տեղ էլ հիմքը նոյնն է։

Ս. Սապահ-Գիւլեան։

Պարիզ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Թերթիս սոյն համարի տեղեկատու բաժնում հրատարակում ենք Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից խմբագրութեանս ստացած հաշիւը Սասունի և ընդհանուր աղէտեալների օգտին հանգանակուած գումարների մասին։

—

Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների ուսուցիչները մտադիր են իրենց համար փոխադարձ օգնութեան ընկերութիւն հիմնելու։ Այդ նպատակով մի յանձնաժողով է ընտրուած, որն արդէն մշակում է ապագայ ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը։ Ի միջի այլոց, մտադրութիւն կայ Թիֆլիսում պանսիօն հիմնելու ընկերութեան անդամների որբերի և անհատարակ զաւակների համար։

—

Սև ծովի նահանգ կազմելու առթիւ մայրաքաղաքի թերթերն ասում են, թէ այդ վերակազմութիւնը կայանում է նրանում, որ Սև ծովի այժմեան շրջանը պիտի անջատուի Կուբանի շրջանից և մի առանձին կառավարչի պաշտօն հաստատելով այնտեղ, այդ կառավարիչը անմիջապէս պիտի ենթարկուած լինի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԳԱՐԷ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Վերջին ժամանակները ամերիկական համարեա բոլոր և մասամբ եւրոպական լրագրերն ու ամսագրերը շարունակ խօսում էին մի գերբնական երևոյթի մասին, որի հետ աւելորդ չէր լինիլ, եթէ ծանօթացնէինք և «Նոր-Դար»-ի ընթերցողներին։

Ահա թէ ինչ է գրում «Նով. Վր.» լրագիրը, որը թարգմանաբար առաջ ենք բերում այստեղ։

«Revue des Revues» ամսագրի տարւայ մարտի գրքում զետեղուած է վերին աստիճանի մի հետաքրքիր յօդուած, որ պատկանում է նոյն ամսագրի խմբագիր Jean Finot-ի գրչին և կրում է «Schlatter, l'homme aux miracles» վերնագիրը։

Այդ ամերիկական «մարգարէի», «սուրբ մարդի» անունը, ինչպէս անուանում են Ամերիկայի լրագրները Շլատտերին, արդէն վաղուց սկսել էր երևալ Նիւ-Եօրկի լրագրների էջերում։ Ժամանակ առ ժամանակ այնտեղ երևան էին գալիս նրա արած հրաշագործութիւնների, բժշկութիւնների զանազան նկարագրութիւններ, ժամանակ առ ժամանակ այնտեղ նկարագրւում էին նրա հանդիպումը ժողովրդի հետ, ամբոխի, վայրենիների հիացումն ու յափշտակութիւնը, բայց մինչև հիմայ նրա մասին չկային այնպիսի մանրամասն տեղեկութիւններ, որպիսին առաջ է բերում հեղինակը յիշուած ամսագրում և որոնք բաւականաչափ լոյս են արձակում վերջին տարւայ այդ անբացատրելի անձնաւորութեան վրայ, որպէսզի կարելի լինէր մի որևէ գաղափար կազմել նրա մասին։

Ահա միքանի յայտնի հանգամանքներ, որոնք, ասում է ռուս յօդուածագիրը, ես հանում եմ Finot-ի յօդուածից մեր ընթերցողների համար։

Ֆրանցիսկ Շլատտերը էլզասցի է։ Նա ծնուել է Էլզասում, 1855 թուին, այն ժամանակ, երբ դեռ այդ գաւառը պատկանում էր Ֆրանսիային, ուրեմն, նա ֆրանսիացի է։ Տեղափոխուելով Էլզասից Ամերիկա, Շլատտերն այնտեղ սկզբում պարապում էր զանազան արհեստներով, մինչև որ, ինչպէս ասում է ամսագիրը, նա յանկարծ մի օր, առաւօտը զարթնելով դարձաւ «սուրբ մարդ»։ Բոկոտն, բաց գլխով, անսովոր հագուստի մէջ, բաց թողած երկայն մազերով, ցնծալի տեսքով, նա այն ժամանակ գնաց Ամերիկայի անապատները, քարոզելով սէր դէպի Աստուած և հոգիների խաղաղութիւն։ Նա իւր մասին ասում էր, որ ինքը երկնքի հասարակ մի առաքեալն է։ Նրան գցեցին բանտը։ Բանտարկեալներն սկզբում ծաղրում էին նրա քարոզները, բայց տեսնելով, որ նա շարունակում է աղօթել բանտի մէջ էլ, ինչպէս անում էր ամենայն տեղ իւր ճանապարհի վրայ, տեսնելով որ նա բժշկում էր իրենցից մի քանիսին, նրանք մնացին մոլորուած… Նա արձակուեց բանտից։ Այն ժամանակ նա ուղղուեց դէպի Թեխասի անապատները։ Նրա անսովոր հագուստը, երկայն մազերը, տարւայ ամեն ժամանակներում բոբիկ ոտները, բաց գլուխը, մշտական աղօթքը բերանին, լուսափայլ դէմքը, արտասովոր կերպով քարշում էին դէպի նա ժողովուրդների խռնուած ամբոխները։ Մինչև անգամ մեքսիկանները համարում էին նրան յարութիւն առած Եղիա։ Իսկ նա ինքը, միշտ համեստ, աւելի լուռ, շարունակ աղօթող, չվրդովուող մինչև անգամ նրանց վերաբերմամբ, որոնք հայհոյում էին, ծաղրում էին նրան, երբէք իւր մասին չէր խօսում, ինչպէս Աստուծոյ մի հասարակ առաքեալի մասին։

Դառնալով ամբոխին, միայն ասում էր. «Լսեցէք և հետևեցէք ինձ»։ Եւ նրա ետևից գնում էին, գնում էին ամբողջ խմբերով, պատահելով նրան գիւղերում, վազելով դէպի նա ամեն կողմից… Գալիս էին նրա մօտ կոյրեր, կաղեր, հաշմանդամներ, խուլեր, անդամալոյծներ, և բաւական էր, որ նա դիպցնէր իւր ձեռքը նրանց, հաւատի կոչելով առ Աստուած, բաւական էր, որ ձեռքը դնէր նրանց գլխին, և նրանց հիւանդութիւնը մի ակնթարթում անցնում էր, կամ նրանք ակնյայտնի թեթևութիւն էին զգում։ Նա ասում էր, որ նրանք բժշկւում են ոչ թէ իւր, այլ իւր հաւատով առ Աստուած, և ամեն ինչ կախուած է միմիայն իւր հաւատից։

Ջրահմարտանում նրան գցեցին գժանոց։ Միքանի ժամանակից յետոյ, նա այնտեղից դուրս եկաւ աւելի մեծ վեհութեամբ, այնտեղ էլ զարթեցնելով դէպի ինքը միայն զարմանք և յարգանք։ Այն ժամանակ նա ուղևորուեց դէպի Կալիֆորնիա։ Անցնելով չհաւատացող ամերիկացիների գիւղերով, միշտ բոկոտն, բաց գլխով աղօթելով, նա ամեն տեղ գրաւում էր դէպի ինքը ժողովրդներին։ Ամեն տեղ նրա առաջ դուրս էին բերում հիւանդներին, նա նրանց բժշկում էր, նրան մօտեցնում էին երեխաներին, նա օրհնում էր նրանց։ Նա աղօթում էր և կապում էր դէպի հաւատը ժողովրդական խմբերին։ Այս օրինակ շարժուելով, նա 1894 թուի դեկտեմբերին հասաւ Սան-Ֆրանցիսկօ։ Այնտեղից նա ուղղուեց դէպի Մոգավեայի անապատները և անցեալ տարւայ մարտին հասաւ Ֆլագստաֆ քաղաքը։ Մնալով այնտեղ միքանի շաբաթ իբրև մի հասարակ խաշնարած, նա ուղղուեց դէպի հնդկական ազգերի բնակավայրերը։ Եւ այնտեղ էլ վայրենիները զարմանքով էին վերաբերւում դէպի նա, տեսնելով նրան համեստ, աղօթող, կանչելով մարդուն դէպի հաւատն առ Աստուած։ Նրանք խմբերով հանդիպում էին նրան իրենց խրճիթների առաջ, լսում էին նրա քարոզները, զարմանալով Աստուծոյ ամենակարողութեան վրայ։

Նա ամեն տեղ սերմանում էր բժշկութեան հրաշքներ և ոգևորութիւն պատճառում վայրենիներին, որոնք հոգւոյ պարզութեամբ հաւատալով նրա զօրութեանը, վազում էին դէպի նա աշխատելով մօտենալ նրա հագուստին։

Օգոստոսի 15-ին նրան արդէն տեսան Ալբուկերկում։ Մի ամսից յետոյ նա արդէն Դանվերումն էր, Կոլորադոյի ամենագեղեցիկ քաղաքներից մէկում։ Այնտեղ, ինչպէս պատմում են, նա գնացել է հետևեալ դէպքի շնորհիւ։ Այդ քաղաքի ասագ Master E.h. Fox-ը, վաղուցանից խլացած լինելով, իմացաւ, որ նա գտնւում է ոչ հեռու այդ քաղաքից Ամազա, և գնաց այնտեղ միքանիների հետ, որպէսզի տեսնի այդ զարմանալի մարդին։ Բաւական էր, որ Շլատտերը մեկնէր իւր ձեռքը, դիպցնէր նրան, և նրա խլութիւնը մի ակնթարթում անցնէր։ Միանգամայն ապշած, հաւատքով լցուած, սագը չգի-

Կովասի կառավարչապետին։ Նահանգի կառավարչի գլխաւոր պարտաւորութիւնը լինելու է նահանգում ռուս գաղթականներ բնակեցնելը։

—

Շուշուէրից մեզ հաղորդում են, որ ժողովրդական դպրոցների ինսպեկտոր պ. Բոգդանովը, այս օրերս գնալով այնտեղ, մի հասարակական ժողով է գումարել ռուսաց երկդասեան տղայոց ուսումնարան բանալու համար։ Այդ մասին հասարակական վճիռ է կայացած, որի զօրութեամբ հասարակութիւնը պարտաւորւում է հոգալ ուսումնարանի շինութեան պարագաները և տարեկան 1000 ր. նպաստ տալ։

—

Մի ֆրանսիացի ինժեներ, պ. Պապասիկ, Թիֆլիսի քաղաքային վարչութեանը խնդիր է ներկայացրել, որով առաջարկում է քաղաքս գազով կամ էլեկտրականութեամբ լուսաւորել։ Նա պայմանագիր է առաջարկում 40 տարի ժամանակով և պարտաւորւում է յայտնի տոկոս վճարել քաղաքի օգտին։ Քաղաքային վարչութիւնը որոշել է պ. Պապասիկի խնդիրն ու ծրագիրը ներկայացնել քաղաքային խորհրդի քննութեան։

—

Գորու գաւառի Ատենի գիւղից մեզ հաղորդում են, որ այնտեղ գտնուող սղոցարանի բանուորները, աւելի քան 300 հոգի, մարտի 23-ին հրաժարուել են բանելուց, որովհետև գործարանատէրը վճարելիս չի եղել աշխատավարձը։ Իշխանութեան միջամտութեամբ գործը վերջացած է խաղաղութեամբ։

—

Մտադրութիւն կայ ռուսաց հոգևոր սեմինարիաներում բժշկականութեան դասեր մտցնելու։ Ուսումը լինելու է երկամեայ։ Բժշկականութեան ուսումը կաւանդուի V և VI դասարանների սաներին կլասիկ լեզուների փոխարէն, որոնց ուսումն այդ դասարաններում բոլորովին կվերացուի։

—

Թիֆլիսին ծանօթ օրիորդ Պապայեանը ապրիլի 1-ին, երկուշաբթի երեկոյեան, տուեց իւր առաջին կոնցերտը։ Արքունական թատրոնի բազմաթիւ հասարակութիւնը բուռն ծափահարութիւնով և փունջերով ընդունեց հայ արտիստ օրիորդին և չելլիստին։ Օրիորդը մեծ աջողութիւն ունեցաւ. նրա ձայնը, կիրթ և համակրելի ու բնական շկոլայով անցած ձայնը յափշտակեց ամենքին։ Ի միջի այլ և այլ բնաւոր կտորների, հասարակութեան խնդրանօք երգեց «Զայն տուր, ով ծովակ» և «Հազար երանի քեզ» հայերէն երգերը։ Վերջին երգը հաւանել են և ռուսները։

—

Ապրիլի 1-ին Թեմիս սըր. առաջնորդը երեք տիրացուների դպրութեան աստիճան տուեց, իսկ ապրիլի 2-ին, առաւօտեան վաղ-վաղ, ուրիշ եօթը հոգու քահանայ ձեռնադրեց, որոնցից երկուսը աւարտել են Ներսիսեան դպրոցը, իսկ միւսները Թիֆլիսի ընծայարանը։

Քահանայական կոչման բաշխումը վերջին ժամանակները շատ անշքեղ կերպով է կատարւում, առաջ հանդիսաւոր էր լինում։

—

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ.— Ինչպէս անցեալ ծննդեան ճրագալոյցի, նոյնպէս և Զատկի երեկոյեան մեր պանդուխտ հայ եղբայրներին առատ ընթրիք տուեց Սիմֆերոպոլի հայ հասարակութեան հաշուով։ Այդ եղբայրական ընթրիքը տեղի ունեցաւ հայոց դպրոցի դահլիճում. մասնակցում էին մօտ 100 պանդուխտ հայեր։ Հոգևորականութիւնն երգեց «Այսօր յարեաւ» շարականը, կարդաց աւետարան և օրհնելով սեղանը՝ հսկում էր ու խրախուսում քաշուող պանդուխտներին, որ առատօրէն վեր առնեն կերակուրները։ Իսկ երգեցիկ խմբի օրիորդները գոգնոց կապած սպասուհիների դեր էին կատարում կերակուր հրամցնելով և դատարկ ամանները ժողովելով։ Նոյնպէս մի երկու գիմնազիստներ և ամեն մի բարի գործի մասնակցող օր. Հ. Քեբարչեան երգեցիկ խմբի անդամների հետ սպասաւորում էին իրենց պանդուխտ հայաստանցի եղբայրներին, մեծ մխիթարութիւն պատճառելով նրանց։

—

«Նով. Օբ.» իբրև լուր հաղորդում է, որ Բաքուի յայտնի նաւթարդիւնաբերող պ. Առաքել Ծատուրեանն իւր գործարանը ծախել է օտարերկրեայ մի ընկերութեան։

—

Նոյն թերթը հաղորդում է, որ Երևանի քաղաքագլուխ ընտրուած է պ. Տէր-Սարգսեան։

—

Թեհրանից հեռագրում են, որ պարսից բոլոր քաղաքները պատրաստւում են տօնելու շահի գահակալութեան 50-ամեակը մայիսի 6-ին։

—

«Պրիազ. Կրայ» թերթի ասելով, շուտով առանձին գրքով լոյս է տեսնելու Սունդուկեանցի «Պէպօ»-ի ռուսերէն թարգմանութիւնը։ Թարգմանիչն է պ. Իւրի Վեսելովսկի։ Կայ Սունդուկեանցի այդ պիեսի և մի ռուսերէն թարգմանութիւն, որ արել է ինքը հեղինակը պ. Պ. Օպոչինինի աջակցութեամբ։

—

ԲԱԳՈՒԻՑ.— Շաբթ գիշերը, մարտի 30-ին այրուեց «Կովկաս» հիւրանոցը։ Թէ հիւրանոցը և թէ տունը ապահովեցրած է։ Մարդկանց թշուառութիւն չի պատահած։

—

Վերջերս «Նոր-Դար»-ում լոյս տեսած՝ Շամախու թեմի գեր. Առաջնորդին մեր կողմից ուղղած մի ակամայ պատասխանը «Արձագանք» թերթի աշխատակից Յ. Ճաղարբէկեանին բնականաբար դուր չէ եկել։ Այդ պարոնը մի անզօր յարձակմունքով և՛ հայհոյանքով և՛ սպառնալիքով փորձում է մեր հրապարակ հանած զուտ եղելութիւնը ջրել։

Մի նամակով, որի բովանդակութիւնը հնարած պատմութիւն է՝ համեմած փողոցային հայհոյանքներով, Ճաղարբէկեանը հաւատացնում է, որ «Նոր-Դար»-ում իւր մասին գրածը—զրպարտութիւն է։

Կան մարդիկ, որոնք իրենց մի սխալ քայլը ծածկելու համար նոր սխալ են գործում, իրենց մի յանցանքը թագցնելու համար նոր յանցանք են գործում..

Մենք խղճացել ենք և խղճում ենք Ճաղարբէկեանին. մեզ վայել չէ դրան պատասխանել։

Գործով հետաքրքրուող ընթերցողին կասենք, որ մենք երբէք և ոչ մէկ դէպքում և ոչ ոքի մօտ պատգամաւոր չենք ուղարկել. դա ֆանտազիա է։ Ճաղարբէկեանը չի հեռացել «Նոր-Դար»-ից, այլ նրա առաջ փակուել են խմբագրութեան դռները 1894-ի վերջին ամիսներում, թէպէտև պարոնը և 1895-ի սկզբներում իսկ իրեն «Նոր Դար»-ի մարդն է ներկայացրել գաւառում թագցնելով եղելութիւնը։

«Նոր-Դար»-ն այն թերթը չէ, որ աշխատակիցներ որսայ, քանի որ ինքն է աշխատակիցներ ստեղծում, սնուցանում, անուն տալիս նրանց, և մեր բոլոր ճշմարիտ ու կարող աշխատակիցները «Նոր-Դար»-ի առաջադիմութեանը աջակցելով պարծենում են «Նոր-Դար»-ով։ Մենք շատ լաւ գիտենք, թէ ինչ զգացմունք է մղում պ. Աբգար Յովհաննիսեանին իւր թերթի միջոցով և զանազան մարդկանց ձեռքով մեզ դէմ յարձակումներ գործելու։

Անձնական և պատուի խնդիրները լրագրով չեն վճռւում, և «Նոր-Դար»-ը բազարնայա թերթ չէ, որ հայհոյանքներին հայհոյանքներով պատասխանէ։

Դա վայել չէ մեզ. մենք կաշխատենք մեր հայեցակէտը հասկացնել իրեն պ. Աբգար Յովհաննիսեանին...

Իսկ ինչ վերաբերում է Ճաղարբէկեանին, մարդը «անկեղծ սրտից և խորին համոզմունքով» այնքան փառաբանել է «Նոր-Դար»-ը և նրա խմբագրին յաւիտեան երախտապարտ լինելու խոստումն արել ու հիացել, նրա վրայ թերթիս խմբագրի իրեն ցոյց տուած բարութիւնը (իւր նամակներից մէկի մէջ) նա այնպիսի հէր——բէ—ն է համարել, որ այժմ ազատօրէն կարող է «Արձագանքի» էջերում սրտի ուզածին չափ հայհոյել, «բարոյական պլանդակութիւն», և այլ այդպիսի բառեր գործածել։

Բայց ով ուզում է, կարող է գալ մեր խմբագրատուն և կարդալ Ճաղարբէկեանի երախտագիտական զգացմունքներով գեղուն չէ——ֆէր նամակները և գովաբանական գրուածքները թերթիս խմբագրին ուղղուած։

Ստորև հրատարակում ենք գեր. Մակար սրբազանի մեզ ուղղած նամակը, իբրև ամենափոքրիկ ապացոյց, որ մենք չենք զրպարտել և չէինք էլ թոյլ տալ մեզ այդպիսի մի վարմունք։

—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մեծապատիւ խմբագիր «Նոր-Դար» պատուական լրագրի պ. Սպանդարայ Սպանդարեան Բարեկամ.

Ներկայ տարւոյս՝ 1896 թուականիս համար իբրև միամեայ բաժանորդագին «Նոր-Դար»-ի արդէն գրկած ենք Ձեզ 10 րուբլի յունուարի սկզբում պ. Յակոբ Ճաղարբէկեանի ձեռով Ձեզ յանձնելու։ Բայց շատ զարմանում ենք, որ ցարդ չենք ստանում Ձեր թերթի համարները։ Արդ՝ խնդրում ենք, որ բարեհաճէք մեր հասցէով Շամախի գրկել յունուարից մինչև տարւոյս վերջի համարները պատուական «Նոր-Դար»-ի։

Բարեհաճեցէք նաև ընդունել մեր խորին յարգանքը, որով մնամք միշտ աղօթարար վասն Ձեր և Ձերայնոց։

Մակար եպիս. Բարխուդարեանց։

Առաջնորդ
Թեմին Շիրվանի Շամախւոյ։
ի 5 մարտի 1896 ամի,
ի Շամախի։

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՇԱՄԱԽՈՒՄ

—

Այս թուականի երեք ամսուայ ընթացքում Շամախու քաղաքային հասարակաց կեանքի երևոյթներից ամենանշանաւորն ու աչքի ընկնողը Մոսկուայի համալսարանի տարեդարձի հանդէսն էր։ Այս հանդէսն առաջին անգամն է տեղի ունենում այս քաղաքում։ Նա կատարուեց յունուարի 12-ի երեկոյեան, զինուորական կլուբի դահլիճում։ Ներկայ էին մի խումբ բարձր ուսումնաւարտ պարոնայք—ծառայողներ։ Սրանցից Շամախում թէև կան մինչև 18 անձն, սակայն հանդէսին ներկայ էին միայն 14 հոգի։ Սրանք ըստ մասնագիտութեան բաժանւում էին այսպէս. իրաւաբան 6 հոգի, բժիշկ—3 հոգի, անտառագէտ—2 հոգի, մաթեմատիկոս—1 հոգի, գիւղագործ—1 հոգի և ընդհանուր գիտութիւն ստացած 1 հոգի։ Ըստ տեղի աւարտման, համալսարաններից՝ 10 հոգի, ինստիտուտներից 2 հոգի, Լազարեան լիցէօնից՝ 1 հոգի և ընդհանուր գիտութիւն ստացած 1 հոգի։ Ըստ պաշտօնի, այդտեղ կային հաշտարար դատաւոր, հաշտարար միջնորդ, դատախազի օգնական, դատական քննիչներ, բժիշկներ և այլն։

Տասն և չորս անձեր ըստ ազգութեան բաժանւում էին հետևեալ կերպով, ռուս 6, լեհացի 5, հայ 2 և վրացի 1.

Դիտմամբ բերած թուանշանները, բացի ընդհանուր հետաքրքրութիւնից, ապացուցանում են թէ որքան չնչին տոկոս է կազմում տեղական բնիկ տարրը։ Տասն և չորս հոգուց միայն 3 հոգի են բնիկներից—2 հայ և 1 վրացի։ Թուրք բնակիչները մի ներկայացուցիչ անգամ չկարողացան ունենալ։ Յիշեալներից ոչ մինը ոչ շամախեցի էր և ոչ Բագուի նահանգից, այլ ճակատագրի նախաշաւղով եկած էին այստեղ զանազան հեռաւոր ու մերձաւոր տեղերից։

Ինչ և իցէ, տարեդարձի տօնակատարութեան մասնակցող 14 անձեր երեկոյեան 9 ժամից հաւաքուեցին կլուբի դահլիճը, որ զարդարուած էր վայելուչ կերպով և ուր նուագում էին զինուորական երաժիշտները։

Երբ ամենքը ներկայ էին, բժիշկ Բերնատովիչը խօսեց ընկերակիցների առաջ հին և նոր բժշկականութեան մասին և իբրև պսակ այդ գիտութեանց, վերջացրեց ֆրանսիական հանճարեղ ուսումնականի Պաստէօրի գիւտերով։

Նրանից յետոյ խօսեց նիկոզայոյ

ւէր ինչպէս յայտնէր իւր շնորհակալութիւնը նրան մեծ գումար առաջարկից, բայց Շլատտերը քաշուեց։ Այն ժամանակ նա առաջարկեց իւր հիւրասիրութիւնը։ Շլատտերն ընդունեց, և այն ժամանակուանից գնաց բնակուեց նրա փոքրիկ բնակարանում, միանգամայն բարգաւաճեցնելով ոչ միայն հիւրասէր տանտէրին, այլ և ամբողջ քաղաքին։

Այստեղ Շլատտերի համբաւը բարձրացաւ վերին աստիճանի։ Նրա բնակարանը շրջապատուած և լցուած էր հիւանդներով և նրան տեսնել ցանկացողներով։ Երկաթուղին միջոց չէր գտնում բերելու այն եկուորներին, որոնք ցանկանում էին գալ այդ քաղաքը. քաղաքի, այդ համեստ բնակավայրի հիւրանոցները լցուած էին և քաղաքը յանկարծ այն աստիճան կենդանացաւ, որ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ դարձաւ, ուր ժողովւում էին զանազան հասարակութիւններ, մինչև անգամ Ամերիկայի ամենահեռաւոր անկիւններից։ Տեղական լրագրները շարունակ լցւում էին Շլատտերի զանազան հրաշքների պատմութիւններով։ Ժողովրդի մէջ բացի այդ «սուրբ մարդի» մասին ուրիշ ոչինչ չէր խօսւում։ Նրա մօտ օրական համարեա 5000 մարդ էր գնում։ Նրա մօտ ժողովւում էին անհամար հիւանդներ, խուլեր, հաշմանդամներ, անդամալոյծներ, թոքախտաւորներ, կոյրեր և նա բժշկում էր նրանց ոչ թէ ձեռքի մի հպումով, այլ մինչև անգամ մի ձեռնոցով, որ տալիս էր ամբոխին։

Նրա սենեակի յատակի վրայ ձեռնոցների ահագին կոյտեր կային, որոնք յետոյ բաժանւում էին խմբերին. նա ասում էր, որ անօգուտ է իւր ձեռքով մօտենալը ամենքին, որոնք ցանկանում էին բժշկուել-ամենայն ինչ հաւատքի մէջն է, և բաւական է մի ձեռնոց, որին նա ձեռք էր կպցրել, որպէսզի այդ ձեռնոցով բժշկի ցաւերին, և այդ միջոցից օգտւում է նա միայն նրա համար, որպէսզի չհաւատացող ամբոխի մէջ հաւատ զարթեցնի։

Նա բժշկում էր օրական 3000—5000 մարդ։ Կոյրերը հեռանում էին նրանից տեսողութիւնը վերստացած, խուլերը—լսում էին, կաղ անկեցողները—ուղղւում էին, անոտ մարդիկ—վեր էին կենում տեղերից և գնում. նրա փառքն ու համբաւը մի ինչ-որ վիթխարի, հսկայական կերպարանք էր ստանում. ամբոխը նրան չափազանցութեան գագաթնակէտին էր հասցնում։ Նրա համար հանդիսաւոր թափորներ էին կազմակերպում, նրա առաջ խոնարհւում էին, նրա մասին ասում էին, որ դա իսկապէս Աստուծոյ առաքեալն է։ Նա չէր ընդունում ոչ դրամ, ոչ վարձատրութիւն և ոչ պարգևներ։—«Ինչիս են հարկաւոր դրանք, ասում էր նա, երբ որ նրան դրամ էին առաջարկում, միթէ ես կարիք եմ զգում. Երկնային Հայրը չէր տալ ինձ այս ամենը, եթէ հարկաւոր լինէր։ Միակ հարստութիւնս—հաւատս է, և ես հաւատում եմ Երկնային Հօրը իմ բոլոր անկեղծ հոգով»։

Մի անգամ նա շրջապատուած էր ահագին ամբոխով, պատմում են, որ նրան մօտեցաւ մի անձնաւորութիւն։—«Հեռացի՛ր» այստեղից, գոռաց նա սարսափած և նա հեռացաւ։ Ժողովուրդն ասում էր, որ նա չի կամենում բժշկել չար մարդկանց։

Նրան ուղարկում էին անհամար ընծաներ, բայց նա միշտ վերադարձնում էր նոյն բերողների միջոցով։ Նրա անշահախնդրութիւնը վկայուած էր ամենքից։ Նրան շրջապատում էին ամերիկական լրագրների թղթակիցները, նրան շարունակ դիտում էին նրանք, և ոչ մի լրագիր չկարողացաւ ասել, որ նա մի որևէ շահախնդրութիւն ունի, բայց ամենքն էլ հաստատում էին, որ նա բժշկում է և իսկական հրաշքներ է գործում իւր հաւատով։

Ահա միքանի հետաքրքիր տեղեկութիւններ,— աւելացնում է յօդուածագիրը,—որոնք առաջ են բերում Ամերիկայի լրագրներն այդ մարդու մասին։

Գեներալ E. E. Sest-ը հրատարակում է «L'Omoha World Herald»-ում մի երկայն յօդուած Շլատտերի մասին, որի մէջ ի միջի այլոց գրում է հետևեալը, «Ամեն ոք, ով մօտենում է նրան, բժշկւում է… D-r Keithhey առողջացաւ իւր բազմամեայ խլութիւնից… Ես ինքս վաղուցուանից առանց ակնոցների չէի կարողանում տեսնել, բայց բաւական էր Շլատտերին ձեռքով իսկ կպչել, որ այլ ես ակնոցների կարիք չզգայի…» Մի աստիճանաւոր l'Union Pacific, պ. Միլլերինգ, երկաթուղու մի դժբաղդութիւնից յետոյ, ոչ միայն չէր կարողանում ման գալ, այլ մինչև անգամ չէր կարողանում շարժել իւր անդամները. նրան բերեցին Դենվեր քաղաքը. նա ոչ միայն սկսեց ման գալ, առողջանալ, այլ և անցաւ նրա խլութիւնը, որով ամբողջ 15 տարի տանջւում էր։

Մի ուրիշ ամսագիր «Rocki Mount in Daily News» հրատարակում է պ. Ստիւարտի մասին, որը 20 տարի խուլ լինելով, մի ակնթարթում բժշկուեց Դենվերում։ Այս «սուրբ մարդի» համար անկարելի ոչինչ չկայ, գրում է այդ լրագիրը, կուրութիւնը, խլութիւնը, բարակացաւը, մի խօսքով ամեն հիւանդութիւն անհետանում է այդ մարդու ձեռքի տակ, ինչպէս մի հասարակ գլխացաւ։

Տիկին Սոօկը միքանի ամիս տանջուելով քաղցկեղով (ռակ), ձեռնոց ուղարկեց Շլատտերին և դրանից յետոյ բաւական էր, որ ձեռքը կպցնէր այդ ձեռնոցին, որպէսզի հիւանդութիւնն անցնէր։ Միննոյնը կատարուեց նոյն քաղաքացի պ. Դաւիդսոնին (լրագիրը առաջ է բերում և քաղաքի անունը ու անձնաւորութեանց հասցէները), և շատ ուրիշներին, որոնք տանջուելով զանազան հիւանդութիւններից, մի ակնթարթում առողջութիւն էին գտել, միմիայն Շլատտերի ձեռքի հպումով։

Ինժեներ Նորին տանջուելով աչքերի սև ջուր հիւանդութեամբ մի ակնթարթում առողջացաւ։ Մի փայտ կտրող, որ կուրացած էր, բոլորովին առողջացաւ Շլատտերի ձեռքի կպչելու շնորհիւ։ Տիկին Մ. Ս. Դալմ դը-Դաւելոկը տանջուելով աչքերի ուռոյցքից, ստանալով ձեռնոցը, դրեց նրան ցաւոտ տեղի վրայ և բոլորովին հիւանդութիւնն անցաւ («Dnnner News», 12 novembre, 1895)։

Երբ «սուրբ մարդը» մօտենում է հիւանդին, նոյն րոպէին սկսում սաստիկ ջերմ է բռնում հիւանդի մարմինը։ Մատները, որ շատ տարիներ անշարժութեան էին ենթարկուած, իսկոյն շարժողութիւն են ստանում, և մի ինչ-որ անբնական թեթևութիւն տարածւում էր ամբողջ մարմնի մէջ և մարդուն պատում էր բաղդաւորութիւն, հաւաստ. Sim Weist de Coloradof-ի աջ ձեռքը անդամալոյծ էր. Շլատտերը կպաւ

Դուրսեր Աստուծոյ էութեան մասին:

Սեղանի սկզբում առաջարկուեց Մոսկուայի համալսարանի առաւել և լայնածաւալ բարգաւաճման կենացը, որ ընդունեց եռակի խուռն «կեցցէով» և երաժշտական խմբի ձայնակցութեամբ:

Կենացին անմիջապէս հետևեց ուսանողական վաղեմի ոգևորիչ «Gaudeamus» երգը: Արտասանած շատ ճառերի մէջ բարի ցանկութիւններ, յաջողութիւններ, բարեմաղթութիւններ էին յայտնըւում, ինչպէս սովորաբար լինում է սեղանի շուրջը խմբուածների ընկերութեան մէջ:

Արդէն կէս գիշերն անցել էր, որ խումբը մտարերելով իւր ուրախ անցեալը, մի առ ժամանակ ասելի գտաւ մոռանալու իրեն շրջապատող հոգսերի ճնշումն ու ծանրութիւնը և վառ յոյսերով ու ուրախ տրամադրութեամբ ցրուեց տները:

Գ. Ց.

Շամախի.

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

⁂ Թաշկենտի «Օկրաինա» թերթը չզգալով այն դրութիւնը և պայմանները, որոնց մէջ գտնւում են նահանգական թերթերը, մատնացոյց է լինում այդ լրագրների անբովանդակ լինելու հանգամանքի վրայ և այդ բանը վերագրում է նահանգական թերթերի չափազանց «անձուկ» դրութեան մէջ գտնուելուն և այդ՝ իրենցից բոլորովին անկախ պատճառներով: «Օկրաինա»-ն ասում է.

> Գիտութիւնը ապացուցել է, որ մանր մասնական ոյժերը միահամուռ աշխատութեամբ կարող են լեռներ տապալել և ծովեր ցամաքեցնել: Այդպէս է նաև նահանգական կեանքում: Զօրաւոր իշխանութեան մանր օրգանների աշխատութիւնը ոչ միայն կարող է այդ զօրաւոր իշխանութեան բարի կամքը և պատգամաւոր ցանկութիւնը բոլորովին անգամալուծել, այլ մինչ իսկ կարող է այնպիսի հետևանքներ տալ, որոնք բոլորովին հակառակ են սկզբնական ցանկութիւններին և մտադրուած նպատակներին: Բայց ցաւալին այն է, որ նահանգական մամուլն այդ դէպքում ոչ մի ուրիշ օրգան կամ հաստատութիւն չի կարող փոխարինել: Եւ շատ բան հարկաւոր չէ դրան: Բաւական է միայն «մերոնց մի գիշեր» նշանաբանը վերացնել: Պէտք չէ մամուլի անտեղիութիւններից վախենալ. մամուլի մէջ ստութիւն, բամբասանք երևան եկած ժամանակ օրէնքը կարող է անօրինին արժանաւոր պատժել: Այդքան քաջութիւն ունենալու դժուար չէ, այլ և հարկ չէ մեծ զօրաւոր իշխանութեան ստեղծելու: Ամեն մի իշխանութիւն արդէն զօրաւոր է, երբ ճանաչում է ճշմարտութիւնը:

Նահանգական մի թերթի այս խօսքերը որքան էլ որ մութ լինին, բայց և այնպէս շատ պարզ ցոյց են տալիս այն սահմանափակ վիճակը, որի մէջ պարտաւորուած են գործելու նրանք:

«Նով. Վրեմ.»-ն ուշադրութեան առնելով նահանգական մի օրգանի այդ խորհրդաւոր ակնարկութիւնները, անհրաժեշտ է տեսնում ընդարձակել նրա իրաւունքների սահմանը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից).

ՈՐՄԻ, 12 մարտի.— Ամեն անգամ սովորած եմ տխուր լուրեր հաղորդել իւր տեսակի մէջ միակ պարսկական Որմի քաղաքից:

Քաղաքիս արուարձանում Միրզա Ջաւի Ջրաղացի դռնից հազիւ տասն քայլ հեռու օր ցերեկով սպանեցին Ալուաջ գիւղացի մի ատրի երիտասարդի: Սպանութիւնը կատարուել է երկու ընկեր պարսիկ ջրաղացպանների ձեռքով:

Սարփարասը, որի պարտականութիւնն էր, միջոց ձեռք չառաւ չարագործներին գտնէ պատժել տալու, նրա համար, որ սպանողները պարսիկներ էին... և դրամական շահ չկար:

Այլ առակ:

Երկու ամիս առաջ Բարանդուզ գաւառի Բարաու գիւղացի Մէյմա Թարուերդեան հայի և Եաղուբ Սայադեան տարբու միջև մի թեթև բանդքակալ է սկիզբ ունենում. կռուողները յետոյ հաշտւում են, բարեկենդանի օրերին փոխադարձաբար հիւր են լինում միմեանց հարսանիքների և գիւղական այլ և այլ հրաւէրքների են մասնակցում: Փետրուար 28-ին Մ. Թարուերդեանը հիւանդանալով մեռնում է: Աչքը լոյս մեր արթուն պահապան սարփարասի. սա լսում է (քրիստոնեայ լրտեսներ ունի մօտը) այս պատմութիւնը և իսկոյն երեք ֆերրաշներ է ղրկում Ե. Սայադեանի և մեռնող Թարուերդեանի հօրեղբօր որդուն բերելու և շղթայում է, մէկին՝ որպէս մարդասպանի, իսկ միւսին՝ որպէս իշխանութիւն չճանաչող անձի, որովհետև չի եկել իւր մօտ՝ չեղած բանի համար բողոք տալու: Մէկը չվճռւած անմեղ մեղաւորներից պահանջւեց պակ 120 թուման կաշառքի խօսք են առնում և նոյն րոպէին գիշերով ուղարկում են ողորմելիներին սարփարասխանի գործիք ատրի բժիշկ Ուշանա-խանի մօտ: Վերջինս, որպէս սարփարասխանի հըլու կամակատար, կալանաւորների կողմից մի պարտագիր է գրում սարփարասի անուանը յիշեալ գումարը հինգ օրում վճարելու:

Մ. Թարուերդեանի 3 աղջիկներն այս իմանալով գալիս են քաղաք և վկայում են, որ իրենց հայրը իւր բնական մահովն է մեռել:

Սարփարասի հաշուին չի գալիս այս մնասակար վկայութիւնը և դուրս է վըռնդում նրանց: Խեղճ, բայց խիղճ ունեցող գիւղացի աղջիկներն իրենց հօրը պարտական չթողնելու նկատումով, դիմում են քաղաքիս մեծ մուշտէյիդին և յայտնում են, որ իրենք, որպէս իրենց հօր միակ ժառանգները, վկայում են, որ իրենց հայրը մեռել է իւր բնական մահով: Աղաչում են նաև, որ ի սէր Աստուծոյ պաշտպանէ անմեղներին: Մուշտէյիդը արձանագրում և կնքում է այդ վկայաթուղթը և տալիս է Սայադեանին:

Պարսից մեծ հոգևորականի (Որմիում) տուած թղթի զօրութեամբ սարփարասը ձայնը կտրում է: Իսկ մեր ծանօթ բժիշկը սարփարասին այս չար պատուից չզրկելու համար, ինքն է դահմաթ քաշում և դէսուդէն դիմում. հաշուելով որ Սայադեանի կողմից ինքը 120 թուման վճարել է սարփարասին, հետևաբար Սայադեանը պէտք է տայ. հակառակ դէպքում գանգատով կառնէ և կրկնակի վնասով: Ինչպէս տեսնում էք, գիւղացի հասարակ հայ աղջիկներն աւելի ազնիւ են, քան մի եւրոպական կրթութիւն ստացած բժիշկ Ուշանա-խան:

Երէցօղլի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.—Մօտ օրերս հեռագիրը հաղորդեց, թէ սուլթանը արդէն ստորագրել է այն իրադէն, որով բողոքական միսիօնարները արտաքսւում են Թիւրք-Հայաստանի հայաբնակ գաւառներից: Դժուար էր ենթադրել, որ Թիւրք կառավարութիւնը կարողանար այդպիսի մի վտանգաւոր արշաւանք սկսել ամերիկացի ու անգլիացի միսիօնարների դէմ, որոնք երկար տարիներից ի վեր հաստատուել են օսմանեան երկրի զանազան մասերում և ունին իրենց պաշտօնին վերաբերեալ արտօնութիւններ: Թէ Թիւրք կառավարութիւնը իւր ընկրած գործը որքան կարողացաւ գլուխ հանել, այդ երևում է Կ. Պօլսից «Daily News»-ին այդ առթիւ գրուած հետևեալ թղթակցութիւնից: Վերոյիշեալ լըրագրին գրում են, որ «Բաղէշի (Բիթլիս) ամերիկական միսիօնարները հեռագրել են Կ. Պօլսի Միացեալ-Նահանգների դեսպանին, որ տեղական իշխանութիւնները դժուարութիւններ են յարուցանում իրենց գործունէութեան դէմ և չեն թողնում անից դուրս գալ իրենց միսիօնարական պարտականութիւնները կատարելու: Միևնոյն ժամանակ դեսպանը ստացել է մի ուրիշ հեռագիր ևս, որով հաղորդում են, թէ ամերիկացի միսիօնարներին պատուիրուել է հեռանալ երկրից դէպի Ալէքսանդրետի կողմերը: Դեսպանատան կառավարիչը Ռիդդլը, դեսպանի բացակայութեամբ այդ բանի դէմ ձեռք է առել խիստ միջոցներ, նրան պաշտպանել է բրիտանական դեսպան սէօր Փ. Կերրին: Ռիդդլը Թիւրք կառավարութեան յայտնել է, որ եթէ ամերիկացի միսիօնարների աքսորման հրամանը անմիջապէս յետ չառնուի, ինքը կը ստիպուի դիւանագիտական ամեն յարաբերութիւն ընդհատել: Ռիդդլը պահանջել է անձամբ տեսակցել օսմանեան արտաքին գործերի մինիստրի հետ, թէև նա այդ ժամանակը խորհրդի է նստած եղել: Ամերիկական դեսպանատան ներկայացուցիչը այնքան վճռական և եռանդուն կերպով է վերաբերուել խնդրին, որ Բ. Դուռը, մանաւանդ տեսնելով անգլիական դեսպանի ցոյց տուած պաշտպանութիւնը, անկարող է եղել դիմադրելու և բաւականութիւն է տուել ամերիկական դեսպանատան ներկայացուցչի պահանջներին: Ամերիկացի միսիօնարներին կատարեալ ազատութիւն է տրուել գործելու իրենց գտնուած տեղերում և նրանց արտաքսելու հրամանը յետ է առնուել: Առհասարակ այն կարծիքն է յայտնւում, որ Բ. Դուռը այդ դէպքում կամեցել է մի փորձ անել միսիօնարների իրաւունքներ սահմանափակելու վերաբերմամբ, սակայն ամերիկական դեսպանատան ներկայացուցիչը իւր վճռական ընթացքով այդ փորձը արմատից խլեց և դրանով Թիւրքիայի միսիօնարներին ազատեց այն դժուար դրութիւնից, որի մէջ կամենում էր Թիւրք կառավարութիւնը դնել նրանց: Այդ փաստը կրկին անգամ ապացուցեց, թէ ինչ նշանակութիւն ունի Թիւրքիայի մէջ վճռական բողոքը»:

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Մինչդեռ Բուլղարիայի դրացիները սկսում են նախանձել այդ փոքրիկ իշխանապետութեան գտած յաջողութիւնների վրայ, մանաւանդ վերջին օրերս, ընդհակառակը նրա ներքին կառավարութեան մասին տարածուած տխուր լուրերը աւելի ու աւելի իրականութիւն են ստանում: Թէ Սոֆիայում և թէ նահանգներում երևան են գալիս հակապետական ձգտումներ, որոնք պտտում են Ֆերդինանդ իշխանի անձնաւորութեան շուրջը: Մինչև Ռուսիայի և Բ. Դրան կողմից Ֆերդինանդի իշխան ճանաչուելը հակառակ կուսակցութիւնը բոլորովին լռել էր, սակայն այժմ մամուլի միջոցով եռանդուն կռիւ է սկսել: Այդ կռուի գլուխ են անցել Ռադոսլաւովը և այդ կուսակցութեան ուրիշ պարագլուխներ, որոնց ցանկութիւնն է բուլղար ժողովրդին ապստամբեցնել Ֆերդինանդ իշխանի դէմ: «Nord» լրագիրը խօսելով այդ շարժման մասին, սաստիկ կշտամբում է հակառակ կուսակցութեան ընթացքը, շեշտելով որ Ֆերդինանդ իշխանը հաւատարմութեամբ կատարեց իւր տուած խոստումը յունադաւան մկրտելով իւր որդուն, որ բուլղարական գահի ժառանգն է: Հակառակ կուսակցութիւնը իւր մղած կռուի պատճառները հիմնում է իւր այն պահանջի վրայ, որ իշխանը պարտաւոր է Տառմովոյի խմբագրած բուլղարական նոր սահմանադրութեան 38-րդ յօդուածը փոխել: «Nord»-ը այդ պատճառը բանաւոր չի գտնում ասելով, թէ այդ բանը վեր է իշխանի իրաւասութիւնից և վերաբերում է ազգային ժողովին, որը ամենայն հաւանականութեամբ կըկատարի իւր յառաջիկայ նըստաշրջանի ընթացքում:

ՌՈՒՍԻԱ և ՉԻՆԱՍՏԱՆ.—«Ռէյտէրի» գործակալութեան Պեկինից հեռագրում են, թէ երբ չինական կառավարութիւնը հաւատացնում է, որ ինքը Ռուսիայի հետ ոչ մի գաղտնի դաշնագրութիւն չի կապել, բացի այդ, յայտնում է, որ այդ դաշնագրութեամբ ցանկացած նպատակին կարելի է հասնել նոյն իսկ առանց դաշնագրութեան:

Այդ առթիւ Բեռլինի «Poste» լրագիրը հետևեալ նկատողութիւնն է անում.

«Վերջին նախադասութիւնը, անշուշտ, վատ ազդեցութիւն կանի անգլիացիների վրայ, բայց որում նրանց այն երկիւղը, թէ Ռուսիան կարող է Չինաստանից չսառչող նաւահանգիստ ստանալ, աւելի ևս կը սաստկանայ»:

նրան և ձեռքը բռնեց, առողջացաւ, զօրացաւ:

Լրագրները մի անբնական հիացմունքով ու յափշտակութեամբ են նկարագրում, որ ստացել է ամբողջ Չլեատերի անհամար երկրպագուների և անհամար բժշկութիւնների պատճառով, որոնց մէկ մէկ թուելն անհնարին է:

Դանվէր քաղաքը դարձաւ «սուրբ մարդու» բնակավայրը, մինչև անգամ «նրա քաղաք» անունն էին տալիս և քանի որ Չլեատերի համբաւը հետզհետէ մեծանում էր ամբոխի մէջ և հասարակ, նրա հրաշագործութիւնները, քանի գնում աւելի և աւելի բազմանում էին: Թւում էր թէ իրօք նրա համար անկարելի ոչինչ չկար: Մի քանիսներն արդէն Քրիստոս էին հռչակում:

Ամբոխը սպասում էր նրանից մի որ և է գերբնական հրաշագործութիւն տեսնել և Չլեատերը կարծես, շլացած այդպիսի փառքով, այդպիսի երկրպագութեամբ, վճռեց ապացուցանել ամբոխին, որ ինքը Աստուծոյ առաքեալ է:

Մի առաւօտ նա յայտնեց հաւաքուած ժողովրդին, որ նա—Քրիստոսն է, որ նա երկնքից է ուղարկուած ժամանակակից մարդկանց փրկութիւն տալու համար... նա յայտարարեց, որ ինքը քառասուն օր ծոմ պէտք է պահի:

Եւ ծոմապահութիւնն իրօք սկսուեց: Շրջապատուած իւր հաւատարիմ թղթակիցներով, նա սկսեց ծոմապահութիւնը, միևնոյն ժամանակ չդադարելով առատօրէն բաժանել իւր բժշկութիւններն ամենքին, որոնք շտապում էին նրա օգնութեանը դիմելու:

Նա աղօթում էր, հաւատալ էր կանչում առ Աստուած, ասում էր, որ հաւատի մէջն է ամբողջ ոյժը, նրա մէջն է միակ փրկութիւնը: Նա օրհնում էր ամբոխին: Եւ քանի որ հետզհետէ նա սկսում էր լղարել, աչքերը փոս էին ընկնում, անհանգիստ էին փայլում, ամբոխն աւելի և աւելի ձգտում էր դէպի նա, և շատերն արդէն սկսել էին հաւատալ, որ նա իսկապէս Քրիստոսն է, և առաւել, որ նրա երեսը, երկայն մազերը ճշմարիտ որ յիշեցնում էին Փրկչի նմանութիւնը:

Եւ քանի որ, հետզհետէ, մեծանում էր նրա փառքն ու համբաւը, նրա առաջ խոնարհւում էին ամենքն էլ՝ և մեծերը, և փոքրերը: Նորա կենսագրութիւնը գրող, ամերիկական հրապարակախօս Macը չէր հեռանում նրանից և ոչ մի րոպէ ամբողջ ծոմապահութեան ընթացքում, ամեն կերպ աշխատելով գտնել նրա մէջ կեղծիք: Բայց ծոմապահութիւնը իսկապէս տևեց քառասուն օր, և երբ վերջացաւ, երբ Չլեատերը նստեց իւր թուլացած ուժերն ամրապնդելու, ամբոխի հիացմունքը սահման չունեցաւ: Ագահութիւնը, որով նա սկսեց ուտել կերակուրներ, մինչև անգամ երկիւղ առաջացրեց ամբոխի մէջ. ամենքն էլ վախենում էին նրա առողջութեան համար: Երբ լրագրողը, նրան աւելի ընտելացած, նկատեց նրան, թէ արդեօք չի վնասել առողջութիւնը այդպիսի ծոմապահութիւնից յետոյ, Չլեատերը պատասխանեց. «Հաւատ ունեցէք. Հայրս որ թոյլ տուեց ինձ ծոմ պահել քառասուն օր, չի դադարի իւր որդու մասին հոգալու»:

Քաղաքը տօնում էր «սուրբ մարդուն». մինչև անգամ Ամերիկայի հեռաւոր անկիւններում արդէն գիտէին Չլեատերի մասին և ամենքն էլ ձգտում էին դէպի նա, իսկ ով չէր կարողանում՝ ուղարկում էր ձեռնոց, որպէսզի այդ միջոցով հասնէր նրա շնորհքը:

Բնակիչներն արդէն վարժուած էին նրա հրաշքներին, այն ինչոր առաջ հրաշք էր երևում—արդէն դարձաւ մի սովորական, բնական երևոյթ, և յայտնի չէ, թէ արդեօք, ինչ պէտք է լինէր ապագայում, եթէ անցեալ տարուայ նոյեմբերի 14-ին քաղաքի մէջ սարսափելի լուր չտարածուէր, թէ «սուրբ մարդն» անյայտացել է:

Առաւօտեան, նոյեմբերի 14-ին, երբ փոքրիկ տան տէրը, որ այդպէս յայտնի էր դարձել երկու ամսուայ ընթացքում, ներս մտաւ Չլեատերի սենեակը, այն ժամանակ իմացուեց, որ նա այնտեղ չէ: Նա անյայտացել էր նոյն հագուստի մէջ, որի մէջ նրան տեսել էին ամենքն էլ, որի մէջ նա եկել էր այդ տունը: Բոլոր խուզարկութիւններն անհետանք մնացին: Նրանից մնացել էր մի երկտող նամակ անգլերէն լեզուով հետևեալ բովանդակութեամբ. «Պարոն Փուա: Իմ առաքելութիւնը վերջացած է: Հայրս ինձ կանչում է իւր մօտ: Ողջունում եմ քեզ: Ֆրանցիսկ Չլեատեր: 13 նոյեմբերի»:

Այս լուրը ինչպէս մի ահռելի որոտմունք սասանեցրեց ամբոխին, որ ժողովել էր Փուայի այդ երևելի տան շուրջը: Ամբոխը անէծք տեղաց, հիւանդները խառնում էին իրենց հառաչանքը ժողովրդի աղաղակ գոչիւնին, կանայք հեկեկում էին, երեխաները լաց էին լինում... բոլորն էլ սարսափեցին և զայրանում էին, որ իրենք մնացին հիւանդ, ապագայի վրայ առանց մի յուսոյ նշոյլ ունենալու, մինչև անգամ չիմանալով թէ ուր պէտք է փնտռել այն մարդը, որին հաւատում էին, ինչպէս Աստծուն:

Այնուհետև բոլոր խուզարկութիւնները Չլեատերին գտնելու համար իզուր անցան: Ոչ ոք չգիտէ, չի տեսել, ինչպէս, երբ և ուր կարող էր անհետանալ այդ տարօրինակ մարդը, որ այնքան հրաշագործութիւններ կատարեց Ամերիկայի այդ մասում: Մինչև անգամ տեղական լրագրներն էլ արտասուքներ էին թափում մարգարէի անյայտանալու համար, որ անհամար ժողովրդին զարմացման մէջ թողեց, ինչպէս և բազմաթիւ հիւանդներին, որոնք եկել էին նրա մօտ և չէին կարողացել աւելի շատ տեսնել նրան:

Բայց եթէ Չլեատերն անյայտացաւ, դրա փոխարէն հիմա գործում է այնտեղ առասպելը: Ժողովուրդը դեռ ևս սպասում է նրան, որ շշկլուած էր մնացել նրա բոլէական անյայտանալու վրայ:

Լրագրութիւնը դեռ շարունակում է զբաղուել նրա անձնաւորութեամբ և շատ ամսագրեր աշխատում են այսպէս թէ այնպէս բացատրել այն փաստերը, որոնք տեղի ունեցան ամբոխի, որոնք հասցրին հիացմունքի և որոնց իսկապէս անկարելի է բացատրել, որովհետև նրանք ակնյայտնի էին ամենքի համար...

Ճիշդ որ մի որ և բանով նրանց բացատրելը ներկայ ժամանակումս դժուար է, թէև բժշկութեան նոյնանման օրինակներ պատահել են բժշկականութեան մէջ, բայց երևի ժամանակն ու գիտութիւնը նրանց բացատրութիւններն էլ մեզ կտայ, ինչպէս բացատրուեցան շատ օրինակներ, որոնք սկզբում հրաշք էին համարւում:

Էմին Տէր-Գրիգորեան:

ԻՏԱԼԻԱ.—«Սանֆանի» գործակալութեան հաղորդած այն լուրը, թէ ռուսական «Կարմիր խաչի» ընկերութեան խմբերը շուտով ժամանելու են Նէգուսի՝ վիրաւորուած իտալացի զինուորներին խնամելու համար, առիթ է տուել Կրիսպիի օրգաններին սաստիկ բողոք բարձրացնելու այդ բանի դէմ։

«Rifbrma» թերթը այդ առթիւ հետեւեալ կարծիքն է յայտնում։

«Իտալիան պէտք չունի այդ օգնութեան։ Ռուսները մեզ մօտ գալիս են ոչ յանուն ընդհանուր կրօնքի, ոչ մարդասիրութեան և ոչ էլ ի սէր քաղաքական պաշտպանութեան։ Իտալիան չի վախենում ճշմարտութիւնը ուղղակի ռուսաց երեսին ասելու։ Նէգուսի ժողովուրդը հարկաւոր եղածը կըխօսի օտարերկրեայ կեղծաւորներին։ Հարկաւոր չէ՛ մեզ։ Վիրաւորները մերն են, մենք ինքներս կարող ենք նրանց խնամել։

«Triduna» թերթը հաւաստացնում է, որ իտալական «Կարմիր խաչի» ընկերութեան մէջ գտնուող շատ իտալացի պարոնք յայտարարել են, որ եթէ «Սանֆանի» գործակալութեան հաղորդած լուրը ստուգուի, իրենք անմիջապէս հրաժարական կըտան։

Իսկ պաշտօնական «Italia»-ն ընդհակառակը քաջալերում է իտալական կառավարութիւնը այն բանի համար, որ նա չի մերժում ռուսաց կողմից առաջարկուած օգնութիւնը։

—

ՔՕՐԷԱ.—Վլադիվոստոկից, մարտ 25-ից «Նով. Վրեմ.»-ին հեռագրում են հետեւեալը.

«Սէուլից հաղորդում են որ քորէացիները վճռել են թերակղզու վրայ գտնուող բոլոր քորէացիներին կոտորել իբրև թագուհու սպանման մասնակցողներ։ Ամեն տեղ քորէացիներից բազմաթիւ խմբեր են կազմակերպուել. ճապոնացիները շատ ծանր դրութեան մէջ են գտնւում Քորէայում. ճապոնիայից պատերազմական նաւեր են ուղարկուել Ֆուզան, Հենզան և Նինսէն։ Դրա հակառակ, թերակղզու վրայ ռուսները աւելի ու աւելի համակրութիւն են գտնում. կառավարութիւնը, պաշտօնեաների մի նշանաւոր մասը և ժողովուրդը սաստիկ փափագում են ռուսաց խնամակալութեան տակ մտնել։ Ռուսաց ներկայացուցիչ Վեբէրը անտարբերութեամբ է վերաբերւում աչքի քորէացիների ցոյց տուած համակրութիւնը, ամենայն խոհեմութեամբ աշխատելով ազատ պահել Ռուսիան ճապոնիայի դէմ գործելու մասին եղած կասկածանքներից, այն ճապոնիայի, որ այժմ ստիպուած է քաղել Քորէայի նկատմամբ իւր հետեւած քաղաքականութեան փտած պտուղները։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

Կ. ՊՕԼԻՍ, 2 ապրիլ.—Հրատարակուած է մի իրադէ, որով հրամայւում է արտասահմանում բոլոր, թէ պետական և թէ մասնաւոր միջոցներով սովորող ուսանողներին վերադառնալ հայրենիք։ Այդ միջոցը պատճառաբանւում է ուսանող թիւրքերի երիտասարդ-թիւրքական ագիտացիային մասնակցելու յաճախակի դէպքերով։

ԲԵՐԼԻՆ.—«Վոլֆի գործակալութիւնը», Պարիզից հասած տեղեկութիւնների հիման վրայ, յայտնում է, որ իշխան Հոհենլոէն իւր Պարիզ եղած ժամանակը յարաբերութիւն չի ունեցել ո՛չ Բուրժուայի և ո՛չ ուրիշ քաղաքական գործիչների հետ։

ՎԵՆԵՏԻԿ.—Թագաւորն ուղեկցեց կայսերական զոյգին մինչև «Հոհենցոլլերն» զբօսանաւը։ Վիլհէլմ կայսրը հերցոգ Սերմանեդին շնորհեց «Կարմիր արծուի» շքանշանը, իսկ Ռուդինիին — իւր պատկերը։

ԿԱՀԻՐԷ.—Դատարանում սկսուեցաւ այն գործի քննութիւնը, որ վերաբերւում է պետական պարտքի գանձարանից գումար վերցնելուն դոնգոլեան արշաւանքի ծախքերը ծածկելու համար։

ԿՕԼՈՄԲՕ.—Լի-Հունգ-Չանգը հաղորդեց, որ թագադրութեան հանդէսից յետոյ կուղեւորուի Բեռլին, Էսսէն, Պարիզ, յուլիս վերջին Ամերիկա գնալիս կայցելի Լոնդոն և նոյեմբերի վերջին կըվերադառնայ Պեկին։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ ՍԱՍՈՒՆԻ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԿԱԾԵԼՈՑ

1895 ապրիլ 1 է 1896 յունուար 31

ՀԱՇԻՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՍԱՍՈՒՆԻ ԱՐԿԱԾԵԼՈՑ

ՄՈՒՏՔ	Լ.	Օ.	Լ.	Օ.
Կ. Պոլսոյ թաղերէ հանգանակեալ	1744	77½		
Մի քանի գաւառներէ »	1105	12½		
Եգիպտոսէ »	441	75		
Արտասահման բնակող Ազգայիններէ հանգանակ.	1504	62½		
Մասնաւոր Ազգայիններէ նուիրեալ	435	71		
			5231	98½
ԵԼՔ	**Լ.**	**Օ.**	**Լ.**	**Օ.**
Սասուն ղրկուած նպաստ գանձ. թուական.	3510			
Դրոշմաթուղթ և դրամական մնաս . : . .	1	80½	3511	80½
Պատրաստ դրամ . . .			1720	18
			5231	98½

ՀԱՇԻՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԿԱԾԵԼՈՑ

ՄՈՒՏՔ	Լ.	Օ.	Լ.	Օ.
Կ. Պոլսոյ թաղերէ հանգանակեալ	1198	60½		
Մի քանի գաւառներէ »	622	61½		
Եգիպտոսէ »	1651	20½		
Արտասահման գտնուող Ազգային Պաշտօնական Մարմիններէ և Ազգայիններէ հանգանակեալ.	5509	41½		
Մասնաւոր Ազգայիններէ նուիրեալ	1169	36		
Քրէտի Լէօնէի ձեռամբ հասած նպաստ. . . .	1169	2		
			11,320	22
ԵԼՔ	**Լ.**	**Օ.**	**Լ.**	**Օ.**
Կարին քաղաք և գիւղօրայք . . . . , .	230			
Բասէն » »	130			
Քղի » »	220			
Դերջան » »	150			
Իսպէր » »	50			
Բաբերդ » »	450			
Քէմախ » »	180			
Երզնկայ » »	300			
Խնուս » »	120			
			1830	
Վան քաղաք և գիւղօրայք	700			
Աղթամար	100			
			800	
Բաղէշ քաղաք և գիւղօրայք	700			
Սղերդ » »	380			
Մուշ » »	150			
			1230	
Խարբերդ քաղաք և գիւղօրայք	700			
Արաբկիր » »	500			
Աղըն » »	100			
Չմշկածագ » »	230			
Չնքուշ » »	230			
Բալու » »	360			
Ակն » »	250			
Արղըն » »	150			
Մալաթիա » »	300			
			2820	
Սեբաստիա քաղաք և գիւղօրայք	300			
» գիւղօրէից համար առանձին . ,	100			
Կիւրին և գիւղօրայք , ,	250			
Շապին գարահիսար և գիւղօրայք . :	250			
Տիվրիկ և գիւղօրայք . . . , ,	280			
Ամասիա-Մարզուան և գիւղօրայք . .	250			
Տարէնտէ	150			
Թոմզարա	150			
Մանճըլըխ, Եեարհիսար, Գարա հաճը օղլու, Գանդալ, գաղի Մաղարա, Գանթարօղ, Խուրտուլու Գայիս, Պօղարմուտ և Ուլաշ թեմերուն .	100			
			1830	
Տիգրանակերտ քաղաք և գիւղօրայք . . .	550			
Չարսանճագ և գիւղօրայք	330			
			880	
Տրապիզոն քաղաք և գիւղօրայք	300			
			300	
Ատանա-Կիլիկիոյ արկածելոց համար , . :	500			
Մարաշ	300			
Այնթապ	50			
			850	
Եդեսիա քաղաք և գիւղօրայք , , : : :	290			
			290	
Կեսարիա քաղաք և գիւղօրայք	200			
			200	
			11,030	
Մասնաւոր արկածելոց . . : .	13	10		
Զզուն ծախք և դրամական մնաս . . .	14	94		
			28	4
Պատրաստ դրամ . . .			262	18
			11,320	22

Տ. Կ.

Պատրիարքարան հայոց ի Կ. Պոլիս։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿ. ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, ապրիլի 7-ին, օր. Վարդուհին, մասնակցութեամբ տ. Մելիքեանի, պ.պ. Միրզոյեանի, Աբրահամեանի և հայ դերասանական ընկերութեան անդամների, կըներկայացնէ

ԽԱԹԱԲԱԼԱ

Կոմ. 4 գոր. և 6 պատ., հեղ. Գ. Սունդուկեանի.

Տեղերի գինը սովորականն է։

Սկիզբը երեկոյեան 8½ ժամին։

Խաղամիջոցներում կընուագէ երաժշտական խումբը։

3—1

Գ. Ֆ. ԼՕԿԿԷԻ

ՏԱԿԱՌԱԳՈՐԾԱՐԱՆԸ

առաջարկում է ամենանոր ձևի

ԳԻՆԻ ԵՒ ՑՆՈՐԻ ԱՆՕԹՆԵՐ

Փոկ դրութեամբ եռացնող տակառներ, անօթներ և առհասարակ ամեն տեսակ ամաններ ջրի- և քացախի համար։ Նմանապէս սեղանական ձեռակերտ, գանազան նկարների

ՊԱՐԿԵՏՆԵՐ

չոր, ճղատած կաղնի փայտից։ Պրէյսկուրանտները ուղարկւում են ձրի Հայերէն նամակների և հեռագրերի համար՝

Казань, Локке,

(М. 24—17

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ, երկու շաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։

Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, 3 (15) ապրիլի «Մինգրելի» շոգենաւը, նաւապետ՝ Միրուէն։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական գինն ունին։
Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները ստանալու համար դիմել՝
Բաթումում—պ. ՎԻԿՏՕՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարվանս. Գէորգ ազայի։
Բագւում-պ. Սամուէլ Դիլդարեանին, Կալաբականենսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՕՒԻ ՌԵՆՈՅԻՆ։

(392) 20—7



ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳԻՐԸ — ՁՐԻ

(М.) 10—3

ԱՌԱՋԱԿԱՐԳ հեծանիւների պահեստ

Ա. ԱՐԼՕՎՍԿՈՒ.

Улица Глинки, 3, С.-Петербургъ

Պատուիրագործուած նորութիւն, առանց շղթայի	245 ր.
Անգլիական թեթեւները,	210 ր.
Յատկապէս ճանապարհորդական դիմացկունները	192 ր
Հանրամատչելի, յայտնի գործարանի սկսած	135 ր.
Մանկական (պնեւմատիկի վրայ սկսած	85 ր.

ԲՈԼՈՐ ԴԱՐԱԳԱՆԵՐԸ

Նոյն տեղում պատրաստութիւն է ընդունում պատկ. „САМОКАТЪ“ ամսագրի համար, 5 ր.։ Ծրագիրը — ձրի

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ Ն. Յ. ԲՈԶԱՐՋԵԱՆՑԻ

Գոյութիւն ունի 1858 թուականից։

Գործարանն արժանացել է ամենաբարձր պարգեւների։

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԵԼԵՖՈՆԸ № 100 ՓԱՍՏ ԵՒ ՈՉ ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ ԽԱՆՈՒԹԻ ՏԵԼԵՖՈՆԸ № 181.

Ցանկանք համարելով ի վնաս ծխողների թանկացնել և գեղեցկացնել ծխախոտի արկղները և արտաքին փաթեթները*), ես աւելի լաւ եմ համարում պ. պ. ծխողներին տալ բարձր տեսակի ծխախոտ, քան արտաքուստ գեղեցիկ փաթեթներ։ Խնդրում եմ ուշադրութիւն դարձնել մեր բոլոր արտադրութիւնների վրայ. Նրանց յատկութիւնը բարձր է ամեն մրցումից և նրանք արժանի են ուշադրութեան իրենց բարձր յատկութեամբ, որին կարելի է հասնել միայն աշխատելով և ծախք անելով, միայն ծխախոտի յատկութիւնը լաւացնելու և ոչ թէ արտաքուստ փաթեթները գեղեցկացնելու վրայ։ Պ. պ. ծխողներին խնդրում եմ փորձել անձամբ և համոզուել։

1896 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՑ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԾԽԱԽՈՏՆԵՐԸ ԵՒ ԳԼԱՆԻԿՆԵՐԸ.

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ	ՊԱՊԻՐՈՍՆԵՐ	ԾԽԱԽՈՏ
(Գլանիկներ) ՃԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ֆրանսիական թղթից, քիմիապէս հետազօտուած № 5 «Էկստրա» 25 հ. 15 կ., 100 հ. 60 կ. 25 հ. 25 կ., 100 հ. 1 ր.	(Գլանիկներ) ՍՊԻՏԱԿ ԹՂԹԻՑ № 36 ԻԻԺՆԸՅՑԱ 10 հատը 3 կ.	Կովկասեան, սկսած 48 կոպէկից մինչև 3 ռուբ. ֆունտը։ Մաքուր [illegible] թիթեղեայ արկղների մէջ. սկսած 4 ռուբլուց մինչև 12 ռուբլի ֆունտը։

ԾԽԱԽՈՏ ՏԱՃԿԱԿԱՆ ՍԵՐՄԵՐԻՑ, ՖՈՒՆՏԸ 1 ՌՈՒԲԼԻ 52 ԿՈՊԷԿ։

Կարելի է ստանալ ամեն տեղ։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարւում են արագ և ճշտութեամբ։

Յարգանօք գործարանատէր՝ Ն. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ։

(416) 10—8.

---

*) Թանկագին փաթեթները և արկղը միայն վնասում են ծխախոտի լաւ յատկութեան։

Тифлисъ. Доз. цензурою 2 го Апрѣля 1896 г

Տպարան Ա. Մելիք-Հաննազարեանցի։

Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, [illegible] Набережн. [illegible]